ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Խ-109-17.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 539 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-109-17.04.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ հարկ է համարում նշել, որ նախագծի ընդունումը հիմնավորվում է սոսկ նրանով, որ դատավորների, դատախազների և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրանց աշխատավարձը պահպանվում է: Մինչդեռ, քրեակատարողական ծառայողները զինծառայողներին հավասարեցված անձինք են: Վերջիններիս առնչությամբ օրենսդիրը տարբեր իրավական ակտերի շրջանակներում որդեգրել է միասնական մոտեցումներ, որոնք առնվազն նախագծի կարգավորման առարկայի տեսանկյունից տարբերվում են դատավորների, դատախազների և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների համար որդեգրված մոտեցումներից:

Այս համատեքստում անդրադառնալով զինծառայողներին հավասարեցված այլ անձանց՝ հարկ է նշել, որ «Փրկարար ծառայության մասին» և «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքներում առկա են աշխատավարձի պահպանման կամ փոխհատուցման այն կառուցակարգերը, ինչ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքում: Ըստ այդմ՝ նախագծի ընդունման դեպքում տարբերակված մոտեցում կդրսևորվի զինծառայողներին հավասարեցված այլ անձանց միջև՝ քրեակատարողական ծառայողների համար ստեղծելով ավելի բարենպաստ վիճակ:

Միաժամանակ, հատկանշական է, որ քրեադատավարական բարեփոխումների շրջանակներում պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման ինստիտուտը վերանայման և վերաիմաստավորման կարիք ունի: Այդ շրջանակներում լիազորությունների ժամանակավոր կասեցման դեպքում աշխատավարձերի պահպանման հնարավորություն ունեցող սուբյեկտների կազմի ընտրության հիմքում դրվող չափանիշները ևս պետք է դառնան առանձին ուսումնասիրության առարկա:

Ելնելով շարադրվածից՝ ՀՀ կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածները թողնել անփոփոխ:

15 մայիսի 2019 թվականի N 539 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Տիգրան Խաչիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-109-17.04.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 15
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-109-17.04.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 08-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Քրեակատարողական ծառայողի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է:»:

Հոդված 2.

Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունից և երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունից հանել «, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» բառերը:

Հոդված 3.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Առաջարկվող նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

Համաձայն Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 165-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դատավորի լիազորությունները կասեցնելու ընթացքում դատավորն ստանում է հատուցում՝ որպես ոչ աշխատողի մեղքով պարապուրդում գտնվող:
Ըստ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի՝ դատախազի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է:
«Քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանմամբ՝ քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է:
Մինչդեռ, «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսվում է, որ քրեակատարողական ծառայողի լիազորությունների՝ քրեական հետապնդում իրականացվելու հիմքով կասեցման դեպքում նրան աշխատավարձ վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է անմեղության հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու դեպքում:
Ընդ որում, ըստ նույն օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ծառայությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում՝ նրան չվճարված աշխատավարձի չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար: Քրեակատարողական այն ծառայողներին, ովքեր ազատման պահից մինչև վերականգնվելն աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ, ստանում են հատուցում, եթե այլ աշխատանքից ստացած ամսական եկամուտը ավելի քիչ է, քան զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պաշտոնային դրույքաչափը: Հատուցումը վճարվում է նրանց՝ ծառայությունում զբաղեցրած վերջին պաշտոնի պաշտոնեական դրույքաչափի և ծառայությունից ազատված ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած տարբերության չափով, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար:
Կարծում ենք՝ նման տարբերակված մոտեցումն այս պաշտոնների միջև հիմնավորված չէ: Ըստ այդմ՝ առաջարկվում է սահմանել միատեսակ սկզբունք՝ առանց խտրականության ենթարկելու քրեակատարողական ծառայողներին: